

որ Նապոլի որդւոյն Մուրհակներ զրկուին այս նպատակով, և հազար բուրի արժէքով նուէր մըն ալ (մեծ լայնքով նրբահիւս կերպաս, Ֆլինդի անօթներ, և այլն, ստորեւ նշանակուածին համաձայն). և թէ բերանացի հրահանգներ տրուին խօջայ Սարհաղի, օգնելու և յառաջացնելու համար իր դատը ընդդէմ անարտօնագիր վաճառականներու և զլիսաւորապէս շեշտելու և պնդելու համար առ կայսրն մատուցած մեր վերջին ծառայութեանց վրայ »:

Միեւնոյն Օրագիր և Խորհրդածորիւնքի մէջ, 1697 Յուլիս 8 թուականով, արձանագրուած է այսպէս.

« Խօջայ Սարհաղ՝ Զուպպերտասդ Խանէն մեր քով վերադառնալով ու հետը բերելով անոր Բերվանեան՝ ուղղեալ Հուկլի և Պալլասոր կառավարիչներուն՝ անարտօնագիր վաճառականները առուտուրէ խափանելու համար, հրաման տրուեցաւ որ սոյն Բերվանեանները անմիջապէս յիշեալ կառավարիչներուն վերադարձուին »:

Հետեւեալ արձանագրութիւնը, 1698 Սեպտեմբեր 22 թուականով, կը կարդանք նոյն Օրագիր և Խորհրդակցութիւնքին մէջ.

« Պր. Ուոլշ և Խօջայ Սարհաղ վերադառնալով երիտասարդ Իշխանին քով իւրենց նուիրակութենէն, յետ վերջացնելու բոլոր գործերն ի մեծ զոհունակութիւն մեզի և ի պատիւ ու համբաւ մեր Ամենապատիւ Տէրերուն, ծանուցանելով միանգամայն թէ իրենք Իշխանին խոստացեր էին արոյրէ երեք փոքրիկ թնդանօթներ, իր հետաքրքրութիւնը նա մանաւանդ իր զինուորական տրամադրութիւնը սաստիկ փափաքելով ունենալ գեղեցիկ ու պատշաճ Հրետանի մը: Իշխանին այս ցանկութիւնը նկատի առնելով և ուզելով զանոնք իրեն շատ հաճելի ընծայեցնել,

Որոշուեցաւ ու հրաման տրուեցաւ որ թնդանօթներն անմիջապէս իրեն զրկուին: Եւ որովհետեւ մենք կրնանք, շատ յանկարծօրէն, ուրիշ առիթներ ալ ունենալ իր շնորհներէն օգտուելու՝ այնպիսի խընդիրներու մէջ որոնք Ամենապատիւ Ընկերութեան գործերուն կրնան մեծ վնասներ

պատճառել՝ առանց իր բարեացակամ պաշտպանութեան:

Դարձեալ որոշուեցաւ որ Նիւ Ֆլինդի անօթներէն, որոնք Անեա նաւով Հնդկաստան բերուեցան և որոնք վերջին տարիներու ընթացքին մէջ Անգլիոյ արտադրած լաւագոյն ու մեծագոյն հետաքրքրական ապրանքները կը համարուին, նուիրատուութիւն մ'ըլլուի Իշխանին, մշակելու համար այն սէքն ու բարեկամութիւնը զոր ինք շատ առանձնայատուկ կերպով և ուրիշ ազգերէն աւելի՝ Անգլիացւոց ցոյց տուաւ »:

Միեւնոյն Խօջայ Սարհաղն էր որ, 1715-ին, Սըրման Պատգամաւորութեան հետ Տեխի գնաց և Սիյար կայսրէն յաջողեցաւ ընդունիլ՝ Անգլիացւոց համար՝ պատմական «Մեծ Ֆարմակը», որով Հնդկաստանի մէջ հիմը դրուեցաւ Բրիտանական կառավարութեան: Ի միջի այլ և այլ պատճառներու, զոր կալկաթայի Խորհուրդն, իր 1714ի Յունուար 27ի նիստին մէջ յայտարարեց, և որով Խօջայ Սարհաղ Մեծ Մոնդոլի Արքունեաց հետ բանակցութեան իբր նուիրակ կարգուեցաւ, կան նաեւ հետեւեալները.

« ա. Ինքը ղեկավարեց մեր գործերը Մոհամէտ Ազիմի Տարպարին մէջ և իր խոհեմ վարմունքով ու զբաւիչ խօսքով ինքզինք սիրցնել տուաւ և մեզի համար ընդունեցաւ այս տեղս (կալկաթա) և ասկէ կախում ունեցող քաղաքները՝ իբր զիջում կամ Ծնորհ (Grant), զոր այժմ մենք կը վայելենք. և այս՝ ի փոխարէն մեր զոյգն ծախքերուն՝ բաղադատմամբ մեր ստացած բարիքին:

բ. Ինք անձամբ ծանօթ էր՝ այժմեան կայսեր՝ Ֆարրուք Սիյար Իշխանին, որ այն ատեն գրեթէ տասնեւչորս տարուան էր: Սարհաղ Իշխանին ընծայեր էր խաղալիքներ որոնք իր տարիքին համար շատ հաճելի նուէրներ էին, և որոնց համար ան իր մեծ զոհունակութիւնը յայտնեց, շատ անգամներ զինք իր մօտ կանչելով ու երկար ժամեր քովը նստեցնելով, որպէս զի իրեն բացատրէ անոնց գործածու-